

նականին ու եկեղեցականին, շատ քիչ բացառութեամբ վերջին շրջանին միայն:

Բ. Ի տես վերոյիշեալ ազնուագգի դժբնդակութեանց ինչ կ'ընէր արդեօք ուսմիկը: Ասոր կեանքը նուազ կը գրաւէ պատմութեան ուշը. եւ հարկաւ անկարող ալ էր սա մրցելու իւր տերանց յղփութեանց հետ: Բայց եւ այնպէս չպիտի կարենար զերծանիլ անոնց հրապուրիչ ազդեցութենէն. եւ Փաւստոս մէկ ջրով կը լուայ ժամանակի «նախարարացն եւ կամ շինականութեանն» ամբոխը (33): Ազատաց ախտերէն անոնց մէջ աւելի ճարակածը եւ կամ աչքի զարնողն էր գինեմուլութիւնը, որ կը թունաւորէ անոնց կեանքը: Մանդակունւոյն օրով կը պատահինք շատերու՝ որոնք հրաժարած ամէն աշխատութենէ, «զտիւն ամենայն յարբեցութեան ծախիցեն, եւ զգիշերն ողջոյն ի քուն հանիցեն», որ էր ներհակն ազնուականաց գիշերազրօսութեան. «եւ այգուցն յարուցեալք ծանրարթունք՝ իբրեւ զխելագարս դանդաչիցեն. եւ չեւ երեկուն թմբրութիւնն թափեալ՝ անդէն ի նոյն դառնայցեն» (128): Ուշագրաւ տիպար մ'է Փաւստոսի մէկ «աշխարհական» երիտասարդը, որ գինուած ու ձիաւոր՝ «գայր թերեւս յաւազակութենէ». եւ այդ վիճակին մէջ ան-